

ԲԱՅ. ՊՐԵ. Վ. Լ. Պ

ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՌԻ, ՏԵՍԽԵՍԻԿԻ, ԵՒ ԲԵՐԵՄՈՒԹԻՒՆ ԳԻՏԵԼԵԱՑ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 15.

1844

ՕԳՈՍՏՈՍԻ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այսաշաղ ու հաւ :

Այրամարդկան պատկերն ու պատմութիւնը դրինք ուրիշ անգամ՝ հիմայ ալ կարծ խօսքով աքաղաղին ու հաւին ստորագրութիւնն ընենք, որոնց գլխաւոր տեսակները նոյն պատկերին մէջ կ'երևնան :

Ծնուզուններուն մէջ ամենէն առաջ մարդուս ընտանեցածը կ'երևնայ թէ աքաղաղը կամ հաւը եղած է, վասն զի շատ ատենէ 'ի վեր է որ ասիկայ գեղերու մէջ կը պահուի. անոր համար թէպէտ շատ աեսակները կան, բայց ամենն ալիրենց ազատութեան սէրն ու աշխուժութիւնը կորսընցուցած են :

Բնդհանուր կարծիք մը կայ թէ աքաղաղը Պարսկաստանէն եկած է արեմուտք. անոր համար Աքիստոփանէս ալ Պարսկաստանի թուզուն ըսեր է հաւին: Բնտանի աքաղաղը վայրենին ամէն յատկութիւնները չունի՝ ինչ որ Հնդկաստանի անտառներուն և արեելեան կղզիներուն մէջ վայրի աքաղաղներուն վրայ երբեմն կը տեսնուին: Բնապատումները ընդ-

հանրապէս դիտեր են որ վայրենի աքաղաղին փետուրները դեղին ու սև կ'ըլլան. կատարքը կամ բբուկը՝, և մորուքը (այս ինքն կտուցին տակէն կախուած կարմիր մները) ծիրանագոյն ու դեղին :

Աքաղաղը կենդանեաց մէջ ամենէն աղէկ կուիւ ընողներէն մէկն է. և կ'ըսեն թէ ան երկիրները, ուր որ դեռ քաղաքականութիւն ու ազնուամտութիւն մտած չըլլալով՝ բարբարոսութիւնը չէ վերցուած, շատ զուարձալի բան կը սեպուի աքաղաղներուն իրարու հետ կուիւ ընել տալը: Հնդկաստան, Չինու երկիրները, Փիլիպպեան կղզիներուն մէջ ու բոլոր արեելք աս տեսարանը ժողովը դեան մեծ զուարձութիւն է: Ամերիկայի միացեալ նահանգները, ու Ասր Ասրեի մէջ գրեթէ ամէն տղայ մէյմէկ աքաղաղ ունին, ու շատը բոլոր ատեննին պարապ կ'անցընեն աս աքաղաղները իրարու հետ կոռուեցընելով. միայն չեն թողուր որ աքաղաղները մէկզմէկ մեռցընեն, հասլա ին-

չուան այնչափ որ յաղթուող աքաղազը ձգէ փախչի . իսկ կռուին վարձքը քանի մը ստակ կամ մէկ ամուր հաւկիթ մըն է՝ որ յաղթուող աքաղազին տէրը յաղթողին տիրոջը կու տայ : Անգղիայի աքաղազները մէկալ ամէն տեսակներէն ալ աւելի համարձակ ու անվախ են . կռուի մէջ Սինու աքաղազներն ալ ասոնցմէ վար չեն մնար :

Աքաղազին իր հաւերուն վրայ ունեցած հոգը ամենուն յայտնի է . անոր համար ոչ միայն օտար աքաղազ շանդիպցըներ անոնց քովը , հապանակ իր հաւերուն սաստիկ վրէժխընդիր կ'ըլլայ : Ապատմեն թէ ատենով հաւի մը տակ քանի մը հատ կաքաւի հաւկիթ թուխս դրեր է մէկը . աքաղազը հաւուն հետ կաքաւի ձագեր տեսածին պէս՝ վրան ցատքեր է ու կատաղաբար կտցելով սպաններ է :

Աքաղազին տեսակը խիտ շատ է . ասոնցմէ մէկն ալ գտակով աքաղազն է , որ աքաղազին բնական աղուորութիւնը կ'աւելցընէ : Տեսակ մը աքաղազ ալ կայ որ կատարք չունի :

Հաւը սովորաբար իրեք օրը երկու հաւկիթ կ'ածէ : Վասնը հինգ կամ երեսուն հաւկիթ ածելուն պէս՝ կը սկսի պատրաստուիլ թուխս նստելու :

Կատ մարդիկ ետեկ ընկեր են առանց հաւի թուխս հանելու , որպէս զի հաւն ալ հաւկիթ ածելէն չդադրի : Տեղ տեղ աս կերպը կը բանեցընեն . կ'աւնեն որձատ աքաղազ՝ մը , փորուն տակի փետուրները կը փետտեն , ու ան փետտուած տեղը եղիչով՝ կը շփեն , ետքը թուխս կը նստեցընեն : Ան հաւկիթներուն վրայ աքաղազը այնպիսի գութ մը կը կապէ , որ մօր պէս կը հոգայ զանոնք :

Եգիպտոսի կողմերը շատ ատենէ որ հաւկիթները փուան մէջ դնելով ձագ կը հանեն : Փուռ կայ որ քառասուն հազարէն ինչուան ութսուն հազար հաւկիթ կ'առնէ : Աս փուռերը բոլորը մէկտեղ իրեք հազարէն աւելի

են , և ինչուան վեց ամիս կը բանին :

Ամէն մէկ թուխսը քսան օրէն կ'ելէ . ուստի տարին ութը թուխս կը նայ ելել ամէն մէկ փուռէ : Փուռերուն ձեւը գմբեթաձե է , մէջը երկու կարգ դարակով՝ , որոնց վրայ հաւկիթները շարած են՝ անանկ որ մէկ մէկու չդրպչին : Արակեցուն քսանը չորս ժամու մէջ հինգ վեց անգամ կամացուկ մը կը դարձընէ հաւկիթները , որ ամէն կողմէն հաւասար տաքութիւն առնեն : Առջի ութ օրը սաստիկ տաք կ'ընեն փուռը , ետքը կամաց կամաց կը պակսեցընեն . իսկ ձագերուն ելելու մօտ օրերը՝ տաքութիւնը հասարակ օդի տաքութեան չափ կ'ըլլայ :

Աս կերպով թուխս հանելը Եւրոպացիք ալ փորձեր տեսեր են որ ոչ միայն հաւուն , հապանակ նաև ուրիշ թուչուններուն ալ կ'ըլլայ . միայն աս կայ որ ժամանակնին նոյն չէ . ինչպէս բադին համար տասնը մէկ՝ տասուերկու օր բաւական է . հնդկահաւին քսան կամ քսանը ութը օր , և այլն : Աս ալ գտան որ հացագործներուն փուռը նոյն աստիճան տաքցուցած՝ Եգիպտոսինէն աւելի աղէկ է : Զագերը հաւկիթնեն ելածնուն պէս՝ մուշտակով պատած սնտուկի մը մէջ դնելու է , որուն տաքութիւնը թըխսմօրը տեղը կը բռնէ , ինչուան որ օդին վարժին . ետքը գուրս կրնան արձըկութիւլ : Առջի օրը ամենաերին բան չեն ուտեր . երկրորդ երրորդ օրը կը սկսին հացի փշրանք ուտել . ետքը իրենք իրենցմէ կերակուր կրնան գտնել :

Բայց անկէ ետեւ ալ զանոնք հոգացող մը գտնելու համար՝ որձատ աքաղազի մը կուտան , որ աղէկ կը հոգայ ինչուան հարիւրը մէկտեղ :

Եւրոպացոց մէջ մէկ քանի հետաքրքիրներ փորձի համար ծոցերնին հաւկիթ պահեր են , ու ան տաքութեամբ ձագ ելեր է :

Փորձուած է որ եթէ վառեկին

կատարքը ձզքես ու նոր բուսած բի-
տը՝ կտրես՝ մէջը խոթեսնէ, կը սկսի
կամաց կամաց արմատ ձգել ու երկրն-
նալ, այնչափ որ իր բուն տեղը նոյն-
չափ չէր կրնալ երկրնալ. ասանկով
կատարեալ եղիթւր կը ձեւանայ :

Հաւկիթի մէջ վառեկին ձեւանալը
շատ զուարձալի տեսարան մըն է :
Հաւկիթը հինգ վեց ժամ տաքնալէն
ետքը, կը սկսի վառեկին գլուխը կրո-
նըկի ոսկրին ձերմըկուցին մէջ լողալ,
անոր ալ մէջտեղը լեցուն պղպջակ
կ'երևնայ՝ արեան բծի մը վրայ :

Ո՞էկ օրէն գլուխը կը տեսնես կլոր-
ցած հաստրցած : — Հետեւեալ օրը կը
տեսնուի կռնըկի ոսկրին կտորուան-
քը իրարու քով մանր գնտակներու
պէս շարած . նմանապէս կ'երևնան
թեւերուն ծայրերը, փորոտիքը, կա-
մաց կամաց վիզն ու կուրծքը, ին-
չուաննաև աչուրներուն առջիգծերը .
կենդանութիւնն ալ կը սկսի նոյն օրը
իմացուիլսրտին շարժմունքէն, ու ա-
րեանը պտըտելէն : — Ելրորդ օրը աս
ամէն բաները աւելի յայտնի կ'երև-
նան . բայց դիտելու բանը սիրտն է՝
որ փորէն դուրս կախուած կը շարժի :
Կը տեսնուին նաև ուրիշ երակներ՝ ը-
ղեղին մաշկին վրայ . ըղեղն ալ կը սկսի
ձեւանալ՝ մանր թեւեր երկնցընելով
դէպ'ի կռնըկի ոսկորը : — Ըորըորդ
օրը աչուրները յայտնի կը ձեւանան,
և գլխուն մէջ հինգ հատ պղտիկ փամ-
բուշտներ կ'երևնան հիւթով լեցուն,
որ քանի մը օրէն կը սկսին կամաց կա-
մաց մէկմէկու մօտիկնալ՝ ըղեղ ըլլալ:
Ո՞էկ կողմանէ ալ թեւերը կ'երկրն-
նան, կողերը կ'երևնան, ու միս կը կա-
պէն : — Հինգերորդ օրը կը սկսի մար-
մինը բարակ մաշկ մը կապել վրան : —
Ո եցերորդ օրը լերգը կը սկսի կար-
մրիլ. վրայի մաշկը կը հաստընայ՝ կաշի
կը ձեւանայ, փետուրներն ալ կը սկսին
բուսնիլ : — Եսօթներորդ օրը կտուցը,
ըղեղը, թեւերը, ձիւերը ամբողջ կ'ե-
րևնան յայտնի : — Իններորդ օրը կ'ե-
րևնայ փայծաղը ձերմակ : — Տասնե-

րորդ օրը երակները սրտին հետ կը
միանան : Ենկէ ետքը քիչ քիչ ամէն
անդամները կ'ածին կը մեծնան, ին-
չուան որ ձագը հաւկիթը կը ծակէ .
և աս կը հանդիպի սովորաբար քսան-
ումէկերորդ օրը, կամ մէկ երկու օր
առաջ կամետեւ :

Ես տեսարանէն աւելի սքանչելի է
թխսմօրը իրեն ձագերուն վրայ ցցու-
ցած գութն ու սէրը . որ թէպէտ ա-
մենուն յայտնի է, բայց լսելու ար-
ժանի է Պիւֆոնին պարզ ու գեղե-
ցիկ ստորագրութիւնը, որ հոս կը
դնենք գրաբառ՝ նստե իբրև մատե-
նագրութեան օրինակ :

“ Եւ մայրն այն կաթոգին, որ այն
չափ խնամով փութայր ’ի թխել,
և որ թխեացն անխոնջ, և գրգեաց
սիրով զորդեակսն որ չեւ ևս էին նո-
րա, չհովանայ ’ի սիրոյն և յետ ե-
ւ լանելոյ նոցա ’ի ձուոց անտի . այլ
տեսիլ նորեկ ծննդոցն՝ որք առ աղ-
կաղկ տկարութեանն տակաւին ևս
պէտս ունին խնամոց նորա՝ յաւե-
լու և ևս ’ի նմա զսէր և զփոյթնո-
րանոր խնամոց : Ոչ այլ ինչ թուի
նա հոգալ, բայց զձագուցն երամ .
նոցին սակս ևեթ որոնէ կերակուր .
և թէ չգտանիցէ երբէք, պեղէ զեր-
կիր մագլցի, և զգիւտս դարմանոյն
ջամբէ նոցա խնդութեամբ . և առ
սէր նոցին ինքն մտադիւր կայ մնայ
անսոււազ : Եթէ զարտուղի մոլո-
րիցին՝ ձայն առնէ նոցա . եթէ օղք
ինչ խոռովիցին՝ ընդ թեւօքն զնոսա
ժողովէ, և կրկին թխէ զնոսա . և
այնչափ հոգ և տագնապ յանձին
բերէ առ աղէտ գորովոյն առ նոսա,
զի հիւծեալ մաշի յայտնապէս, և
գիւրաւ որոշի այնուհետեւ ’ի մա-
րեաց միջի մայրն որդեսնոյց՝ ’ի
խոռուեալ փետրոցն, ’ի գետնաքարը
թեւոցն, ’ի կերկերեալ ձայնէն, և ’ի
խանդակաթ գրգանացն ազգի ազ-
գեաց, որք առ հասարակ զմայրե-
նի սիրոյ և զխնամոց տան ձշգրտիւ
զտիպս օրինակի :

„ Եւ ոչ միայն անձնամուտաց գտա-
„ նի նա առ ՚ի ձագուցն պահպանու-
„ թիւն, այլ և յամենայն ՚ի վտանգս
„ դիմագրաւ ՚ի նոցին սկաշտպանու-
„ թիւն : Այժէ յանկարծ բազէ ընդ
„ օդս երեւեսցի, և ահա մայրն այն
„ երկչոտ և ապիկար, և ՚ի փախուստ
„ պատրաստական ՚ի բնէ, առ սէր
„ որդւոցն անդիքաջութեամբ, խոյա-
„ նայ հանդէպ ահագին ճապուացն,
„ և ՚ի սուիչ և ՚ի կառաջ և թեոցն
„ բաբախմամբ ահ արկանէ գիշա-
„ խանձ որսողին . որոյ պարտեալ յան-
„ կարծելի ոսոխէն՝ մեկնեալ ՚ի բաց
„ հեռանայ, այլումիմիք ակն եղեալ
„ որսոյ դիւրագիւտի : Ուուի իսկ ե-
„ թէ լիով ունի հաւ զամենայն հան-
„ գամանս զբարեմոյն առաքինութե-
„ այլ գոգ ստգիւտ իմն առաւելա-
„ զանց սիրոյնորա և բնութեանն այն
„ իցէ, զի եթէ երբէք ուրեք ՚ի թու-
„ խըս ոք տացէ նմա զձուս հաւուց
„ ջրասիրաց, նա զնոյն խնամն զոր առ
„ իւր հարազատսն ցուցաներ՝ ոչ ար-
„ գելու և յօտարաց անտի, այլ որ-
„ պէս մայր քան թէ դայեակ դար-
„ մանէ և յանձանձէ զնոսին : Աւ յոր-
„ ժամ'ի բնութեանն ազդմանէ բե-
„ րեալք՝ ՚ի գետ ուրեք դիմեն նոքա-
„ անկանել, և ՚ի լսդ զբօսանել, անդ
„ է տեսանել զեղկելի դայեկին զվա-
„ րանսն և զտագնապ և զանհնարին
„ անձկութիւն սրտի, զի տակաւին
„ ևս մայր զանձն համարի . փութայ
„ ճեպի խառնել ՚ի ջուր անդր զկնի
„ նոցա, այլ յետս ընկրկեալ յանըն-
„ գել տարերաց լուծական բնու-
„ թեանն՝ յածի կոծիւթափառեալ
„ ըրջի զգետափամբն, և զդողանի
„ հարեալ յուսակտուր խուճապի .
„ զի տեսանէ զձագմն ՚ի մօտալուտ
„ վտանգին, և ձեռն տալ և օգնել
„ մատաղերամ որդեկացն ոչ ունի , :

| Ժամկեր :

Այս ըսուած թանձրամորթ
կենդանին իրեն ներքին և արտաքին
կազմուածքին կողմանէ խոզին շատ
նման է, միայն ոտքերն ու ակռաները
խոզինէն տարբեր են . վասն զի ասոր
կնձիթը ոչ միայն շարժուն է, հապա
նաև կ'երկըննայ ու կը կարձընայ, և
կընայ անով գեանէն բան վերցընել.
ուստի պատճաւոր կենդանիներուն
կարգէն ալ կընայ սեպուիլ :

Ովորաբար գիշերները գուրս կ'ել
լէ . և իրեն քալուածքը ցատքըտելով
է, ու պէտք եղած ատեն շուտ շուտ ալ
կը վազէ . ջրի մէջ խիստ աղէկ կըլո-
ղայ, և երբոր մէկը ետեւէն իյնայ՝
ջուրը կընետուի . շատ անգամ ին-
քիրմէ ալ կը մտնէ լողալու համար :
Կերակուրը պտուղ և կակուղ տերե-
է . ուրիշ կենդանիներուն ցինասեր .
և թէպէտ վրան յարձակին՝ ինք զին-
քը զապաշտպաներ՝ թէ որ իրեն փախչե-
լու ճամբան արգիլուած ըըլայ : Ի՞-
չը գիշեր ատեն կը փալփրի . ականջ-
ները հաստ են, վիզը խոզինէն աւելի
երկայն, և ձայնը թեթե սուլելու պէս
ձայն մըն է . թէ որ պզտիկուց բըռ-
նուի դիւրաւ՝ կ'ընտանենայ :

Ի՞չ կենդանին մէկ տեսակ միայն կը
կարծուէր, այսինքն հարաւային Ի՞-
մերիկայի մէջ գտնուածը : Պիւֆոն
և իրեն հետեւողները տեսնելով որ աս
կենդանին իրենց ատենը հոն միայն
կը գտնուէր, ըսին թէ հարաւային
Ի՞մերիկայի մէջ գտնուած կենդանի-
ները՝ Ի՞սիայի Ի՞շրիկէի ու Աւրո-
պայի մէջ չեն գտնուէիր . կամ թէ հին
ցամաք երկրին կենդանիները թէպէտ
և անոնցմէ սերուած ըլլան, բայց
այնչափ փոխուած են՝ որ իրարու ամե-
նելին նմանութիւնունին : Աւ սակայն
հիմա ստուգուած է որ Ի՞մերիկայի
թափիրէն զատ կը գտնուի նաև Ի՞-
սիայի մէջ Ալաքըս թերակղզին և
Այումատրա կղզին : Ի՞չ մեր պատկեր-
քին մէջին ալ Ի՞սիայի տեսակէն է,